№ 69 ԿԻՐԱԿԻ 30 ՄԱՐՏԻ

1914
ԲԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ 30 ՄԱՐՏԻ № 69

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.
Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը—85 կ.։
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետեւեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» վրձինի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Այսօր, կիրակի, մարտի 30-ին, լրանալով

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՔԻՇՄԻՇԵԱՆԻ

մահվան քառասնօրեակը, տեղի կունենայ պատարագ և հոգեհանգիստ Նորաշէնի սուրբ-Աստուածածնի եկեղեցում, որի համար այրի ԹԱՄԱՐԱ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՔԻՇՄԻՇԵԱՆԸ յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, ազգականների և ծանօթների։
Պատարագի սկիզբն է առաւ. ժամը 10-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին։
286. 1—1

Գ. ՏԷՐ-ՌՈՒԲԻՆԵԱՆ խորին վշտով յայտնում է իր ծանօթներին և ազգականներին, որ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանված

„ՍԱՆԴՈ ՄԱՅՐԻԿԻ"

մահվան եօթնօրեակին, այսօր, ժամը 12-ին Խօջիվանքի գերեզմանատանը լինելու է հոգեհանգիստ։
288. 1—1

ԿԻՐԱԿԻ ԵՒ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 30-ԻՆ ԵՒ 31-ԻՆ
ԿՈՎ. Կ. ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒՄ
(Պասկեվիչի փող. № 13) —◆— տեղի կունենայ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՎԱՃԱՌՔ

աշակերտների պատրաստած ձեռագործների՝ կանանց և մանկական զգեստների, բլուզների, շրջազգեստների, սեղանատան և այլ սպիտակեղէնի, նաև գլխարկների, գուլպաների, ժերսէների, փուփայկաների և այլն։
Ցուցահանդէսը բաց է առաւօտ. ժամը 10—3-ը։
(կ.) առ. ՄՈՒՏՔԸ ԶՐԻ Է։ 282. 2—2

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Րտիշչեվսկայա 13, տէլէֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վարօրոք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(հ.կ.) առ. 868. 100—41

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ
ՄԱՍՆԱԳԷՏ
Սիֆիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնների։
Սրսկումն «606»-ի և «914»-ի։
Ընդունելութիւն (առ. ժ. 1—2
(եր. ժ. 5—8
Ելիզավետինսկայա փ. № 39. տ. Զաքէթեանի։
Տէլէֆոն № 9—17.
(չ.ու.կ.) առ. 901. 100—57

ՆԿԱՐԻՉ
Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ԱՆԻԻ ԱԼԲՈՄԸ
◆ գունատիպ ◆
Լոյս տեսած Վիէննայի Գաաֆիէշ Քունստ Ինդուստրի Կայսերական Ընկերութեան տպարանում։
ԾԱԽՎՈՒՄ Է Թիֆլիսում մեծաքանակ—Մանթաշեանցի խանութում (Մադաթեան կզզի). իսկ հատով—«Բլան է Նուար» խանութում և «Գուտենբերգ» գրավաճառանոցում։ Գինը—հատով՝ 1 ր. 20 կ., մեծաքանակ գնողներին զեղչ 20%.
(կ.) առ. 122. 25—8

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
(Ասսիստենտ Բեռլինի պրոֆ. Պօզների)
վերադառնալով արտասահմանից, ներկայ տարվայ մայիս ամսից կը վերանորոգէ հիւանդների ընդունելութիւնը ՊԵԱՏԻԳՈՐՍԿՈՒՄ։
(կ. հ.) առ. 104. 50—15

ԿԱՐՍՈՒՄ
ԲԺԻՇԿ
Լ. Գ. Տէր-Գրիգորեանց
Մասնագէտ կանացի և վեներական հիւանդութիւնների, Միխայլովսկայա փող. տուն Շավէրցեանի, նոտարի գրասենեակի մօտ։ ԸՆԴՈՒՆՈՒՄ է երեկ. ժամը 5—6-ը։
(կ. հ.) առ. 253. 5—4

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պաշտօնական։ Բարձրագոյն անուանական հրաման կառավարիչ սենատին.

Պետական հիմնական օրէնքների 99-րդ յօդուածի հիման վրա հրամայում ենք Պետական Դումայի զբաղմունքները ընդհատել այս մարտի 29-ից և վերսկսել 1914 թ. ապրիլի 15-ին։

Կառավարիչ սենատը չի յապաղի ի գործադրութիւն սրա պատշաճ կարգադրութիւնը անելու։

Իսկականի վրա Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրված է՝

«ՆԻԿՕԼԱՅ»

Ցարսկոյէ-Սէլօ, 23 մարտի 1914 թ.

Կնքեց մինիստրների խորհրդի նախագահ Գորեմիկին։

Այս հրամանը կարդացվեց Պետական Դումայում, որ ի պատիւ Կայսրի բացագանչեց «ուրա»։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Նորին Մեծութիւնների տեղումս գտնվելու առիթով վարչական պատիժներից կամ մեղմվեց, կամ ներվեց։

«Շտանդարտի» վրա կայացաւ նախաճաշ Բարձրագոյն ներկայութեամբ։

ՈՒՐՄԻԱ.—Գիշերս թիւրքական քիւրդերը թիւրք զինուորների ներկայութեամբ յարձակվեցին պարսկական կողմում գտնվող Ջերմա գիւղի ասորիների վրա։ Հարևան գիւղերի ասորիները մասնակցեցին հրացանաձգութեանը, որը դադարեց ռուս զորքերի գալստեամբ։

ԹԵՀՐԱՆ.—Սեմնէ է մեկնում Քիւրդստանի նոր նշանակված նահանգապետ Սարդար-Մօհէն պարսիկ կոզակների ուղեկցութեամբ ռուս օֆիցէրի հրամանատարութեամբ։ Յոյս կայ, որ այդ զօրախումբը կարողանայ կարգ ու կանոն հաստատել քաղաքում։

Կ. ՊՕԼԻՍ (Ուշացած).—Մամուլը քննում Բ. Դրան և իտալական դեսպանի միջև առաջացած բանակցութիւնները։ Իտալիան վերադարձնում է Դոդէկանէզը, բայց պահանջում է վճարել ծախքերը գրաւման ժամանակամիջոցի համար, նաև նշանակել իտալացի պատգամաւորներ կղզիներում ամնիստիայի կանոնաւոր գործադրութեան վրա հսկելու համար։ Բ. Դուռը համաձայն է բոլոր զիջումներին, բացի իտալացի պատգամաւորներ նշանակելուց։

ՊԱՐԻԶ.—Արտաքին գործերի մինիստր Դումէրգը և Ջավիդ-փաշան ստորագրեցին ֆրանս-թիւրքական համաձայնութիւն՝ թիւրքական փոխառութիւնը բաց թողնելու և Թիւրքիային տրվող ֆինանսական արտօնութիւնների ու ֆրանսիացիներին տրվող տնտեսական կոնցեսիաների մասին։

ԲԵՆԳԱԶԻ.—Բուկաչապի զօրամասը վաղ առաւօտ ենթարկվեց ապստամբների յարձակմանը, որոնց փախուստի դարձրեց բերդից օգնութեան եկած հետևակ գունդը։ Ապստամբները կորցրին 100 սպանված և վիրաւոր. Բէնգազիի վաշտը կորցրեց 3 սպանված ու 6 վիրաւոր զինուոր. մի օֆիցեր թեթև վիրաւորվեց։

ՎԻԷՆՆԱ.—Հաղորդում են Դուրացցոյից, որ յոյների կողմից Եպիրոսի հարցի մասին բանակցող Կարապանոսը մեկնեց Կորֆու, որտեղից կը վերադառնայ մի քանի օր յետոյ՝ հարցի վերջնական կանոնաւորման համար։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Մինիստր-նախագահ կոմս Տիսսան զետեղել է «Իգացմօնդս» լրագրում երկրորդ յօդուած արտաքին քաղաքականութեան մասին, որի մէջ մատնանշում է, որ Աւստրօ-Ունգարիան առաջինը հռչակեց Բալկանեան թերակղզու քրիստոնեայ ժողովուրդների ազատ զարգացումն ու անկախութիւնը։

Այդ խնդրում նա ընթանում է Ռուսաստանի հետ ձեռք-ձեռքի տուած և կարող է հանդէս գալ Ռուսաստանի քաղաքականութեան դէմ միայն այն դէպքում, երբ վերջինս ձգտէ նուաճելու բալկանեան ժողովուրդներին կամ խնամակալութիւն հաստատէ նրանց վրա։ Ոչ ոք այդօրինակ ներհակ դրութիւն չէ ցանկանում։ Ընդհակառակն, եթէ Աւստրօ-Ունգարիան Ռուսաստանի համաձայնութեամբ ապահովէ Բալկանեան թերակղզու խաղաղ զարգացումն ու անկախութիւնը, այդ կողջունվի բոլորի կողմից ուրախագին։

Պատգամաւորութիւնների վերջին նստաշրջանում կոմս Տիսսան յայտնեց, որ միապետութիւնը մեծ ծառայութիւններ կը մատուցանէ խաղաղութեան գործին, եթէ ապագայում Ռուսաստանի քաղաքականութիւնը հակասութիւններ չը պարունակէ իր մէջ Ռուսաստանի և Աւստրօ-Ունգարիայի ձգտումների միջև Բալկաններում։ Անկեղծ գոհունակութեամբ կարելի է ողջունել, որ Թագաւոր Կայսրը, ինչպէս և ռուսական քաղաքականութեան պատասխանատու ղեկավարը հետևում են պարզ ու կանոնաւոր քաղաքականութեան, որպիսին պատերազմի վտանգ չէ յարուցանում։ Ի նկատի ունենալով այդ, մենք յօժարութեամբ ամեն ինչ անում ենք երկու տէրութիւնների միջև համաձայնութիւն պահելու համար։ Սակայն, ռուս ժողովրդի մէջ տիրում է սխալ պանսլաւոնական ուղղութիւն, որ ուղղված է Աւստրօ-Ունգարիայի կենսական շահերի դէմ, մանաւանդ ունգար ժողովրդի դէմ։ Անկարելի է թագցնել, որ եթէ այդ ուղղութիւնը յաղթանակէ ռուսական քաղաքականութեան մէջ, այդ դէպքում առաջ կը գայ պատերազմի լուրջ վտանգ, որի դէմ ապաստան կորոնենք երբեակ դաշնակցութեան մէջ։

ՀՌՈՄ.—Պ. Հ. Գ. Թղթակիցը տեղեկացաւ, որ յունաց նոտայի վերաբերմամբ ներկայացված պատասխանի նախագիծը, որ յանձնված է մարկիզ դի-Սան-Ջուլիանոյին երբեակ համաձայնութեան դեսպանների կողմից, հանդիպել է նպաստաւոր վերաբերմունքի։

ՄԻԼԱՆ.—«Ջիոռնալէ-Միլան» դիրիժաբլի փորձակման ժամանակ, լրագիրների ասելով, 50 մարդ ստացան թեթև վէրքեր, իսկ երեք հոգի ծանր վիճակում տարվեցին հիւանդանոց, ուր եկան իշխանութիւնները և դիրիժաբլը կառուցանող ինժեներ Ֆորլանինին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—o—

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Կ. Պօլսից հեռագրում են, թէ երիտասարդ-թիւրքերի կառավարութիւնը հանգստացրեց հայոց պատրիարքարանին, որ իբր թէ Բիթլիսում վերջնականապէս ճնշված է քիւրդական ապստամբութիւնը և որ այնտեղ տիրում է լիակատար հանգստութիւն։

—

Կ. Պօլսից հաղորդում են, որ Հայաստանի գեներալ-տեսուչները շուտով մեկնելու են իրանց պաշտօնատեղին։ Այդպիսով ուրեմն, եթէ միայն կարելի լինի հաւատալ, Բ. Դուռը մօտիկ ապագայում գործադրելու է հայկական բարենորոգումները համաձայն մեծ պետութիւնների կաբինէտների մշակած նախագծի։

—

Պետ. Հեռագրական Գործակալութեան Կ. Պօլսի թղթակիցը հեռագրում է, որ, Բիթլիսից ստացված տեղեկութիւնների համաձայն, տեղական առեւտրականները նորից իրանց ապրանքները տարել են խանութները, Խիզանում իշխանութիւնները ձեռնարկել են իրանց պարտականութիւններին։ Զօրքերը հալածում են ապստամբներին։ Տիրում է լիակատար կարգ ու կանոն։

—

Պետերբուրգում ստացված տեղեկութիւնների համաձայն, թիւրք դիւանագէտները Բիթլիսում քիւրդերին զսպելու համար ձեռք առնված միջոցները համարում են բաւական, մինչդեռ ռուս դիւանագէտները տրամադրված են յոռետեսութեամբ։

—

Կ. Պօլսից հեռագրում են, որ գերմանական դեսպան ֆօն-Վագենհէյմը Բ. Դրանը կտրուկ պահանջ դրեց ձեռք առնել լուրջ միջոցներ Բիթլիսում, իսկ Անգլիան երկրորդ անգամ պահանջեց մեծ վեզիրից ուշադրութիւն դարձնել Բասրայի վիլայէթի կրիտիկական դրութեան վրա։

—

Կ. Պօլսից հեռագրում են.

«Հեռագրական հաղորդակցութիւնը Բիթլիսի հետ կիրակի օրվանից խզված է, որովհետև քիւրդերը կտրել են բոլոր թելերը։

«Հակառակ կառավարութեան հաւաստիացումներին, յուզմունքը ընդարձակվում է։ Ամբողջ Քիւրդստանում ընդհարումներ են քիւրդերի և թիւրք զօրքերի միջև։ Տրապիզոնից և Մօսուլից ուղարկվում են զօրքեր։ Հայկական վիլայէթում տիրում է ծայրայեղ յուզմունք այն տեղեկութիւնների առիթով թէ՝ Բիթլիսի անկարգութիւնների պարագլուխ մօլլա Սէլիմը 10 բէկերի հետ թագնվել է ռուսաց հիւպատոսարանում, իսկ հիւպատոս Շիրկօվը յայտարարել է նրան ռուսական դրօշակի պաշտպանութեան տակ։

«Գեներալ ֆօն-Սանդէրսին, որ մեկնել էր Փոքր-Ասիա, առաջարկված է անյապաղ վերադառնալ Կ. Պօլիս։ Նրան զօրքերով ուղարկում են Էրզրում և Երզնկա»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒՏ «ՄՇԱԿԻ» ՖՈՆԴԻ

—

Յօգուտ «Մշակի» ֆոնդի ստացանք Գրիգոր ա. ք. Մանդակունուց իր աշխատասիրած հետևեալ գրքերը. 1) 2 օրինակ «Ոսկի բարեկամ հայ ընտանեաց», պատկերազարդ, 4-րդ տպագրութիւն, էջ 1400, գինը 5 ր.։ 2) 2 օրինակ «Սուրբ Գրոց հին-ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը՝ լուսաբանութեամբ և աշխարհի անցքերով», էջ 915, գինը 2 ր. 50 կ.։ 3) 5 օրինակ «Դիւան Տփխիսի հայոց եկեղեցիների», էջ 80, գ. 55 կ.։ 4) 3 օրինակ «Մաշտոց Մեսրովպը. հայոց տառերի և տպագրութեան գիւտը և սկզբնաւորութիւնը մեր ազգի մէջ», էջ 32, գինը 10 կ.։ 5) 5 օրինակ «Զգուանքներ», էջ 40, գինը 20 կոպ.։ Ընդամենը 19 ր. 05 կոպ.։

Վերոյիշեալ գրքերը վաճառվում են «Մշակի» խմբագրատանը։

ՄԻ՛ ԳԱՂԹԷՔ ՎԱԹԱՆԻՑ

—

Ղարաղալա (Կարսի շրջ.), 17 մարտի

1882 թ., երբ Ալէքսանդրոպոլից, շրջակայ գիւղերից և Թիւրքահայաստանից հաւաքվելով Ղարաղալա բնակութիւն հաստատեցինք, համարեա բոլորս չքաւոր մարդիկ էինք։ Բայց շուտով միջոցների տէր եղանք։ Մի զոյգ եզ չունեցողներս գութանը մենակ լծեցինք, մի կով չունեցողներս տասնեակներով կով կթեցինք, մի հատ հացահատիկ չունեցողներս վագոններով ունեցանք, պարտքով ու փողով ապրողներս հազարների տէր եղանք. գիւղը իր նիւթական միջոցներով շրջակայ գիւղերի վրա ազդեց. տասնեակ գիւղեր կախում ունէին Ղարաղալայից։ Եւ Ղարաղալան առաջին հայ գիւղն էր, որ կաթի գործարան շինեց, որից դարձեալ հազարներ էր օգտվում։

Բայց առանց վերապահութեան նախ ասեմ, որ ինչքան միջոցներս լաւացան, այնքան մենք բարոյապէս անանկացանք. առանձին միակողմանի շահի ձգտումը մեզ ուղիղ ճանապարհից թեքեց. պարզ ճշմարտութիւնը աւելի անարգեցինք, քան խնկական կեղծը. Նախանձն ու քէնը մեզ զրկեցին ինքնաճանաչութիւնից... Վարկաբեկվեցինք...

Մեզ քայքայում էր արդէն բարոյական հիւանդութիւնը, և ահա վրա հասաւ աւելի սոսկալին՝ արտագաղթը...

Քսան տարուց աւելի է, որ գիւղը գաղթականութիւն է դուրս տալիս։ Գաղթի դուռ բաց անողները դարձեալ եղան երկու խարբերդցի տնուորներ, որոնք զանազան երկիրներ թափառելով՝ եկել մեզ դրացի էին եղել։ Նախ նրանցից մէկը իր կնոջը թողեց գիւղում ու գնաց. յետոյ երկրորդը գնալիս՝ առաջ գնացողի կնոջը հետը տարաւ։ Բայց առաջին գնացողը գործարաններում հիւծվել էր և շուտով մահացաւ, դըժբաղդ կինն էլ գժվեց և 20 տարի է, ինչ Նիւ-Եօրկի յիմարանոցներում տառապում է... Մի զաւակ ունէին, նա էլ իր հայ լինելու հանգամանքը կորցնելով՝ արդէն կորած է հայի համար...

Եւ ահա՝ գաղթի համար այդ բացված դռնից գնալով-գնալով՝ այսօր գիւղի կէսն արդէն գաղթել է, մնացածների էլ շատերի նորահաս տղերքը գնացել են։

Տնով գաղթողներն իրանց տարիների անտեսութիւնը չնչին գնով վաճառում, գընում են. ճանապարհին ունեցածները վատնելով և անտանելի նեղութիւններ կրելով՝ հասնում են Լօս-Անջէլօս։

Այժմ նոր նամակներից երևում է, որ այն գերդաստանների զաւակները, որոնք գիւղում դիրքի ու կարողութեան տէր էին և իրանք էին գործաւորներ բանեցնում, ներկայումս այնտեղ՝ մի կտոր հացի համար՝ գործարաններում ֆիզիքապէս քայքայվում են կամ, գործարանի կեանքի հետ չը հաշտվելով, մի վակն են ձեռք բերում, որպէսզի փողոցների կեղտը թափելով՝ գոնէ իրանց չարքաշ գոյութիւնը պահպանեն...

Եւ այն երիտասարդները, որոնք այստեղ որևէ կարգ ու կանոնի հնազանդվելը ստրկութիւն էին համարում, հիմա այնտեղ գործարաններում դաժան մեքենաներին ստրուկ են դառել։

Այստեղ գիւղը քայքայվեց, իսկ այնտեղ՝ գնացողների ֆիզիքականը և կարողութիւն ունեցողների կարողութիւնը։

Այս ամենից յետոյ եթէ մի մխիթարական կողմ կայ—թէև ուշացած—այդ էլ այն է, որ Ամերիկայից վերջերս ստացված նամակները լիքն են հիասթափութեամբ և գնացողները զղջալով զղջում են իրանց մայրենի հողը թողնել-հեռանալուն համար։

Մարտիրոս Ապաճեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Նոր մերկացումներ

Շուշի, 20 մարտի

Սրանից մօտ 10 տարի առաջ, երբ ամեն տեղ, ինչպէս և այստեղ, միանգամայն խաղաղութիւն էր տիրում, իր ձիու վրա զբօսանք կատարելիս՝ մի քանի գնդակներով Շուշում սպանվում է երիտասարդ Թամիրենից Միշան (Միշա Թամիրեան)։ Քաղաքցիք ոչ մի կերպ չեն կարողանում սպանութեան պատճառները բացատրել, որի շնորհիւ խղճմտութեան համար էլ մութն է մնում: Ջոնի համար ցաւում են ամենքը, առանց ազգի ու կրօնի խտրութեան, որովհետև հանգուցեալը վայելում էր ամենքի սէրն ու յարգանքը: Ամենքը սպասում էին այս հանելուկային սպանութեան ողբալի պատճառի երևան հանվելուն, որը միայն այժմ մերկացվելու վրա է:

Անցեալ օրը քաղ. դպրոցի Թուրք աշակերտներից մէկին ուսուցիչը հրաւիրում է գրատախտակի առաջ: Աշակերտը ուսուցչի մօտ կանգնած պատասխանելու ժամանակ՝ հագուստի տակ պահած փոքրիկ դաշոյնը վայր է ընկնում տափատի (բրիկ) միջով դէպի ցած ու ծայրը կանգ առնում գետնին: Նա զգում է, որ դաշոյնը վայր ընկաւ, բայց հնարաւորութիւն չէ ունենում ոչ վերև բարձրացնելու, ոչ էլ դուրս հանելու: Երբ ուսուցչի բոլոր հարցերին պատասխանում է, ուսուցիչը առաջարկում է նստել տեղը, սակայն աշակերտը դժուարանում է տեղից շարժվել, ի նկատի առնելով որ քայլերը փոխելու ժամանակ դաշոյնը վայր պիտի ընկնէ: Ուսուցչի առաջարկը մի քանի անգամ կրկնվելուց յետոյ՝ աշակերտը ստիպված սկսում է քայլերը զգուշութեամբ շարժել դէպի նստարանը, սակայն դաշոյնը վայր է ընկնում, որից յետոյ ուսուցիչը վերցնում է ու ներկայացնում աւագ ուսուցչին ու մանկավարժական խորհրդին: Անմիջապէս ուսուցչ. սենեակն են հրաւիրում աշակերտին ու հարց ու փորձի ենթարկում, որից երևում է, որ դաշոյնը տուել է նրա հայրը, Խան-Ղարադաղսկին: Դաշոյնը դիտելիս՝ կարդում են հայերէն տառեր, որից պարզվում է, որ այդ նոյն դաշոյնը տասը տարի առաջ հանելուկային պարագաներում սպանված Միշա Թամիրխանեանն է:

Գործը յանձնված է քննիչին, որը քննութեան ենթարկելով Խան-Ղարադաղսկիին, որի որդու ձեռին է գտնվել դաշոյնը, պատասխանում է, որ 20 տարի առաջ մի հայից է գնել: Վկայ ծառայողը, որը սպանութեան ժամանակներում ծառայելիս է եղել Թամիրխանի մօտ, յայտնել է, որ սպանութեան առաւօտը այդ նոյն դաշոյնը ինքը սրբել, մաքրել և տուել է հանգուցեալին, ու յայտնել է, որ ինքը շատ լաւ ճանաչում է, թէ դաշոյնը, որ կապելով վերջին անգամ մէջքին, այլ ևս չէ վերադարձել, և թէ գիտէ, որ դաշոյնը սեփականութիւնն էր իր խաղէյինի:

Կարծում ենք, որ քննութեան վերջը կը պարզի մարդասպանների ով լինելը: Քաղաքացիք հետաքրքրութեամբ սպասում են քննութեան հետևանքին: Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Փոխարքայի խորհուրդը որոշել է զեմստվային միջոցներից 147,000 ր. յատկացնել պոլիտեխնիկումի շինութեան գործին:

◆ Երկրագործութեան դեպարտամենտի Կովկասի լիազօրի մօտ կայացած նիստը՝ մասնագէտ գիւղատնտեսների մասնակցութեամբ, քննեց Մուղանում փորձնական կայարան հաստատելու հարցը: Այս կայարանի շինութեան համար ծախք հաշւում են 200 հազար ր., կահաւորման համար 80,000 ր., իսկ 1915 թ. ծախքի նախահաշիւը հասնում է 35,000 ր.: Շինութեան աշխատանքները կը սկսվեն այն ժամանակ, երբ երկրագործութեան դեպարտամենտից այդ առիթով նպաստ յատկացվի:

◆ Առաջիկայ ապրիլի 13-ին և 14-ին, Արտիստական Ընկ. դահլիճում, ռուս յայտնի բանաստեղծ Կ. Դ. Բալմօնտ կը կարդայ երկու դասախօսութիւն բանաստեղծութեան մասին:

◆ Նահանգապետը թոյլատրել է Յովսէփեան դպրոցի հոգաբարձութեան, առաջիկայ մայիսի 6-ին Արտիստական Ընկ. ամառային շէնքում զբօսանք կազմել յօգուտ դպրոցի չքաւոր աշակերտուհիների:

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրական վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ «Թիֆլիսի պօստային գրասենեակում և սրա քաղաքային բաժանմունքներում զատկական շնորհաւորական նամակների ընդունելութիւնը սկսվում է մարտի 31-ից մինչև ապրիլի 5-ը: Այն անձանց, որոնք կամենում են որ իրանց շնորհաւորականները տեղ հասնեն ապրիլի 6-ին, սրանով յայտնվում է, որ նամակները պօստարկղների մէջ չը նետեն, այլ յանձնեն կենտրոնական պօստի գրասենեակի ցպահանջ թղթակցութիւններ տուող պաշտօնեային, մարտի 3-ից մինչև ապրիլի 5-ը, ամեն օր, առաւօտեան ժամը 8-ից մինչև երեկոյեան ժամը 7-ը: Նոյնպէս վարվել և Կուկիայի, Պուշկինեան փողոցի, Հավլաբարի և Նաւթլուղի պօստային բաժանմունքներում»:

◆ Պօստ-հեռագրական վարչութիւնը խնդրում է նոյնպէս յայտնել. «Հաշվի առնելով, որ ժամանակին տէրերին հասցվեն զատկական շնորհաւորական հեռագրերը, Թիֆլիսի պօստ-հեռագրատան կառավարիչը խնդրում է պ.պ. հեռագրողներին, իրանց հեռագրերը հեռագրատուն յանձնել վաղօրօք, աւելացնելով հասցէից առաջ «поздравительная» խօսքը, որը կը հաշւվի ձրի: Այդ հեռագրերը տէրերին կը յանձնվեն հէնց Զատկի առաջին օրը»:

◆ Վրաստանի էկզարխ Ալէքսէյի նախաձեռնութեամբ Թիֆլիսում, «Խելքից պատուհաս» կօմեդիայի հեղինակ Ա. Ս. Գրիբոյեդովի անունով մօտ ապագայում հիմնվելու է մի ընկերութիւն:

◆ Զատկական տօների պատճառով, երէկ Թիֆլիսի բոլոր դպրոցների աշակերտութեանը արձակուրդ տրվեց երկու շաբթով:

◆ Բաթումի նահանգապետ Բ. Ս. Ռօմանովսկի-Ռօմանկօ, որ գտնվում էր Թիֆլիսում, ամսիս 27-ին մեկնեց Բաթում:

ԿՈՎԿԱՍ

◆ «Баку»-ն հաղորդում է, որ տեղական հարուստ հայերից մէկը վճռել է մօտ մի միլիօն րուբլի նուիրաբերել հայերի կուլտուրական կարիքների և լուսաւորութեան գործի համար:

◆ Նաւթարդիւնաբերող Փիթօյեվ և Լիանօզով հիմնել են նաւթային նոր ընկերութիւն Գրօզնայում հինգ միլիօն րուբլի հիմնական դրամագլխով:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետական գանձատան և ֆինանսների մինիստրութեան հաշւով, ներկայումս Ռուսաստանը եւրոպական դրամատներում ունի ազատ գումար $515^{1}/_{2}$ միլիօն րուբլի:

◆ «Р. В.» լսել է, որ ժող. լուս. մինիստրութիւնը մի օրինագիծ է մշակում, որ իրաւունք է տալու մինիստրութեանը ներկայացուցիչներ ունենալ ձայների հաւասարութեամբ զեմստվային և քաղաքային ինքնավարութիւնների նիստերում, ժողովրդական կրթութեանը վերաբերող հարցերի քննութեան ժամանակ: Այդ «բարենորոգումը» մինիստրութիւնը պատճառաբանում է նրանով, որ մինիստրութիւնը յատկացնելով խոշոր գումարներ ժողովրդական կրթութեան գործի համար, ներկայ պայմաններում զրկված է զեմստվային ու քաղաքային ինքնավարութիւնների վրա ազդելու հնարաւորութիւնից մինիստրութեան մտադրութիւնները անցկացնելու մտքով:

◆ Պետերբուրգում չեն դադարում խօսել՝ թէ կոմս Վիտտէն շուտով կոչվելու է դարձեալ պետական գործունէութեան:

◆ Քիշինեվում Զատկի առիթով թռուցիկներ են տարածվում, որոնցով յորդորվում է ջարդել հրէաներին:

◆ Կիեվում գիւղացի տղաները խաղալիս իրանցից մինին դատելով դատապարտեցին կախաղանի: Երեխային իջեցրին թօկից արդէն մեռած: Դատաւորներից մինը, ցնցված եղելութիւնից, ընկաւ գետը և խեղդվեց:

◆ Պետերբուրգի քաղաքային դուման 100,000 ր. նուիրեց մայրաքաղաքի գործազուրկ բանւորների օգտին:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երգիծաբանական երեկոյթ

Արտիստական թատրոնում, մարտի 28-ին, տեղի ունեցաւ հայկական երգիծաբանական երկրորդ երեկոյթը, կամ հայկական «Кривое зеркало»-ն, Թիֆլիսի հայ հասարակութեան երկսեռ խաւերի ներկայութեամբ:

Առաջին բաժնում գեղասան Ալիխանեան կարդաց «Հայ թատրոնի պատմութիւնը» խորագրով երգիծաբանական դասախօսութիւնը, հեղ. Սալ-Մանի և Գ. Երիցեանի:

Ալիխանեան կարողացաւ կարդալ, համապատասխան իր նիւթի, տեղ-տեղ ոգևորված և տեղ-տեղ էլ սառը տոնով: Այստեղից պէտք է եզրակացնել, որ Սալ-Մանի և Երիցեանի հեղինակութիւնը պարունակում էր տեղ-տեղ հարուստ երգիծանք բաւականին ծիծաղ և, ըստ հայկական սովորութեան, աւելորդաբանութիւն:

Ալիխանեանի ընթերցման ժամանակ, յընթացս 2 ժամի, խաղացվեցին միմեանց ետևից՝ 1) Կարինեանի «Աշոտ» ազգ. ողբերգութիւնը, 2) Սունդուկեանի «Գիշերվայ սաբրը խէր է», 3) Շիրվանզադէի «Չար ոգին» դրաման, 4) Ահարոնեանի «Ուխտաւորները» սիմվոլիկ դրաման, 5) Շանթի «Ճամբուն վրան» և 6) նոյնի «Հին Աստուածները»:

Աջողված պէտք էր համարել «Աշոտը», «Ուխտաւորները» և «Ճամբուն վրան»:

Դրանով վերջացաւ առաջին բաժինը:

Կարճ ընդմիջումից յետոյ սկսվեց երկրորդ բաժինը:

Այստեղ առաջինը Երամեան կարդաց զեկուցագիր՝ թէ ինչ բան է ֆուտուրիզմը: Իսկ Լևոնեանը (ոչ Գարեգին) բեմ եկաւ ֆուտուրիստական զգեստով:

Ապա կայացաւ կրկին Ալիխանեանի ատենաբանութիւնը Թօրամանեանի՝ ճարտարապետութեան վերաբերմամբ արած դասախօսութեան մասին, մոգական լապտերով: Պէտք է ասել, որ ամէնաջողվածը այս էր, որ պարունակում էր սուր երգիծանք և որ բաւական ծիծաղեցրեց հասարակութեանը:

Միջանկեալ յիշենք, որ, ինչպէս յայտարարված էր, բաժանվեց, միօրեայ «Կաղ Դև» թերթը աջող ու անաջող բովանդակութեամբ:

Իսկ յետոյ ցոյց տրվեց կենդանի սինեմատօգրաֆ, այն մասին, թէ ինչպէս Գարեգին Լևոնեան կատարեց ճանապարհորդութիւն դէպի Ռուսաստան և Եւրոպա, անցնելով մօտ 20,000 վերստ տարածութիւն... Թելի կծիկով: Դեռ Լևոնեանի թելի կծիկը կէս չէր եղել, երբ թատրոնի հասարակութեան խոշոր մասը կառքերով ուղևորվում էր դէպի իր տները.

Մինչև երրորդ երգիծաբանական երեկոյթը՝ մենք կասենք, որ այդ նորոյթը ինքնին համակրելի է հայ կեանքին, որովհետև, եթէ կուզէք, մեր այժմեան կեանքը ոտքից գլուխ «Кривое зеркало» է. Ու եթէ երգիծ. երեկոյթի նախաձեռնողները տանեն այդ գործը որոշ սիստեմով և, որ գլխաւորն է, անաչառութեամբ, օբեկտիւ կերպով և ոչ միակողմանի կամ անձնական միտումներով, այն ժամանակ, անկասկած, կը դառնայ այդ գործը մեզ մօտ ևս և կը ստանայ, ինչպէս ասում են, քաղաքացիական իրաւունք:

Առողջ ու արդար հումօրով պէտք է խարազանել հայկական այնքան առատ բացասական յատկութիւնները... Ես

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Բանաստեղծութիւններ», Արմենուհի Տիգրանեան 1914 թ., Թիֆլիս, գ. 50 կոպ.

Մեր սկսնակ բանաստեղծուհիներից է Արմենուհի Տիգրանեանը: Մինչև այժմ իր ոտանաւորները նա զետեղում էր զանազան պարբերական հրատարակութիւնների մէջ: Առաջին անգամն է, որ նա հանդէս է գալիս իր ներկայ ժողովածուով:

Արմենուհի Տիգրանեանը տակաւին իր սուբեկտիվ վերապրումների առաջին շրջանումն է գտնվում: Նրա երևակայութիւնը տակաւին ջինջ երազների և անուրջ-ցնորքների եթերումն է սաւառնում: Նրա քնարը մի լար ունի միայն և այդ լարը հնչեցնում է յատկապէս սիրոյ պատրանքի քնքոյշ մեղեդիներ: Սէրը, մաքուր պատանեկական անարատ սէրը, Արմենուհի Տիգրանեանի մէջ ունի իր ցնորական աշխարհը, համակված խորհրդաւոր տենդով, լռիկ մրմունջով, կարօտ ու թախիծով: Նա չէ սիրում այն զգացմունքով, որը ընդունակ է նրան «տարփանքի թափով» նիւթի հետ կապել, որովհետև «անզուսպ վայելքից», լուռ, անհրապոյր մեռնում է սէրը դեռ երբէք չապրած»: Նա սիրում է եթերայինը, սիրում է «անդարձ երազը», որ ընդունակ է «զեփիւռի նման» փարել ու անցնել: Նա վախենում է տանջանքից, վախենում է հոգեկան պայքարից, որովհետև պագուանքից ու համբոյրից բղխող, «նիւթին կապված» զգացմունքը միայն յուսահատութեան ու վհատ վայրկեանների պատճառ է դառնում: Սակայն սիրոյ պատրանքն էլ ունի իր ալեծածան ևլևէջները. նա մերթ թախիծով, մերթ կարօտով է լցնում բանաստեղծուհու տրամադրութեամբ համակված երգչուհու սիրտը: Եւ այնքան դիւրաթեք, այնքան զգայուն է նրա սիրտը, որ յաճախ մի ամենաթեթև պատրուակ ընդունակ է նրա «սիրուն կեանքը մի վեհ աւերակ» դարձնել, տեսլերքը մշուշապատել, մենութեան կրաւորական շրջանակը նրա միակ վայրը դարձնել:

Արմենուհի Տիգրանեանը տակաւին ազդեցութիւնների շրջանումն է գտնվում. պարզապէս նկատելի է, որ նրա վրա շատ են ազդել Աւ. Իսահակեանը ու գլխաւորապէս Վ. Տէրեանը: Պարզ ու սահուն լեզու ունի նա, բայց զուրկ չէ աւելորդ կրկնութիւններից:

Պէտք չէ երբէք մոռանալ մի կարևոր հանգամանք. դա այն է, որ որքան սեղմ լինի գրողը իր արտայայտութիւնների մէջ, որքան ամփոփ՝ իր լիրիքական զեղումների մէջ, այնքան վառ, ցայտուն ու խոր կը լինի նրա արտադրութիւնը: Կրկնութիւնները կամ գրողի շատախօսութեան և կամ արտայայտութեան աղքատութիւնն են շեշտում: Այդպիսի աւելորդ կրկնութիւններ ունեն նրա «Մոռացումի երգերից»-ը, «Ով ես, ասա»-ն, «Հովի թևի հետ»-ը և այլն:

Աջողված կտորների մէջ առանձնապէս պէտք է յիշել «Մոխ էլ ինձ եթեր»-ը «Օրօրոցի երգը», որի մէջ ջերմ զգացմունքի մեղմ արտայայտութիւն կայ:

Գրքոյկի վերջում զետեղված է «Լեգենդը», որի առանցքը նոյն սիրոյ պատրանքն է. մշակման կարօտ է այս գործը:

Ժողովածուի մէջ, ճիշդ, կան աւելորդ կտորներ, որոնք թէ ըստ ձևի և թէ ըստ իմաստի իրար նման են, բայց և այնպէս երիտասարդ բանաստեղծուհու այս առաջին փորձը արժանի պիտի համարել թէ ուշադրութեան և խրախուսանքի:

Սուրխաթեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Կովկասեան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբաւորումը և հասարակական շերտաւորումը», Բ. Իշխանեանի, Թիֆլիս, 1914 թ., էջ 207, գ. 75 կ.: 2) «Русскіе законы о женщинѣ», В. Михайловой, Москва, 1913 г., ст. 118. 3) «Քաղաքացիական կրթութիւն», Անդրանիկ Գըլտրեանի, Մարզուան, 1913 թ., էջ 236, գ. 7 ղրուշ: 4) «Մարդու և միքենայի մէջն», Բօգդանովի, թարգ. Սէ-Դայի, Թիֆլիս, 1914 թ., էջ 16, գ. 5 կ.: 5) «Изъ матеріаловъ для исторіи армянъ на Югѣ Россіи», Меликсеть-Бекова, Тифлисъ, 1914 г., ст. 27. 6) «Ֆանտազիօ», Յ. Ալփիարի, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 139, գ. 10 ղրուշ: 7) «Հաջի-Մուրադ», Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի, Թիֆլիս, 1914 թ., էջ 185, գ. 15 կ.: 8) «Երկու պատմուածք», Մ. Գորկիյի, թարգ. Յ. Յակոբեանի, Թիֆլիս, 1914 թ., էջ 15, գ. 15 կ.: 9) «Կարկուտ», Գ.Ք. Գորգեանցի, Թիֆլիս, 1914 թ., էջ 20, գ. 5 կ.: 10) «Գերեզմանատուն գնալը», Մարսէլ Պրէվօյի, Թիֆլիս, 1914 թ., էջ 24: 11) «Կարմիր մեխակ», դը-Ամիչիսի, թարգ. Բ. Վարդանեանի, Թիֆլիս, 1914 թ., էջ 27, գ. 8 կ.: 12) «Изъ грузинскихъ поэтовъ», Н. Е· М., Тифлисъ, 1914 г., ст. 255, ц. 1 р. 25 к. 13) «Ձեռնարկ կար ու ձևի ըստ Տէօդորի», տ. Շ. Եւանգուլեանի, Թիֆլիս, 1914 թ., էջ 93: 14) «Հայերէն-անգլիերէն զրուցատրութիւն», Սահակ-Մեսրոպի, Կ. Պոլիս, 1913 թ., էջ 267, գ. 1 ր.: 15) «Առաջնորդ խօսակցութեան և նամակագրութեան հայերէն և ֆրանսերէն», հետևողութեամբ դոքտ. Էրլինգի, Կ. Պոլիս, 1914 թ., էջ 16: 16) «Ազգին վարիչները», Ռ. Գաբաղաշեանի, Կ. Պոլիս, 1914 թ., էջ 96: «Պատանի» ամսագրի № VI, Թիֆլիս, 1913 թ., էջ 43, գ. 25 կ.: 18) «Լուսաղէմին», ալմանախ, Բաքու, 1913 թ., էջ 48, գ. 20 կ.: 19) «Ազգագրական Հանդէսի» XXV գիրքը, Թիֆլիս, 1914 թ., էջ 240: 20) «La fête de l'Arménie. Le 1500-me anniversaire de la fondation de la littérature Arménienne et le 400-me anniversaire de sa renaissance par l'intraduction de l'imprimerie en Arménie», P. Garabed Der-Sahaghian, Վենետիկ, 1913 թ., էջ 16:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Քերքի, 14 մարտի

Քերքիի հայոց ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը, ի պատասխան «Մշակի» № 37-ում այստեղից Աղիմի գրած նամակին հարկ է համարում յայտնել, որ թղթակցի հաղորդած տեղեկութիւնը չէ համապատասխանում իրականութեանը:

Տեղիս ծխ. դպրոցի շէնքը կառուցված է ոչ թէ մի մասնաւոր անհատի ծախքերով, այլ ընդհանուր ժողովրդական ծախքով. դպրոցի կառուցմանը մասնակցել է Քերքիի ամբողջ հայ հասարակութիւնը:

Քերքիի հայոց ծխ. դպրոցի՝
Հոգաբարձութիւն

Ռոստով Դ./վ., 10 մարտի

1907 թ. սինօդական վճռով Էջմիածնի սինօդը յանձնեց ինձ ի դատ մարմնաւոր իշխանութեան մեղադրելով ինձ 292 ր. Կարմիր Խաչի անուան, և ապա 400 ր. Էջմիածնին պատկանող դրամների վատնման մէջ:

1912 թ. Խարկովի դատական պալատը Լուգանսկում նշանակելով դատական օր յիշեալ գործի առիթով՝ ընդունեց Լուգանսկի իմ նախկին դպիր Ս. Սարգսեանից գրաւոր մեղայական Ալէքսանդրապօլի դատական քննիչի միջոցով, որ ինքը Սարգսեանը 1903 թ. վերջին ամիսներում 292 ր., որ յանձնել էի նրան ծրարով՝ ուղարկելու Եկատերինօսլաւ նահանգապետին, պօստում կորցրել էր (գրպանից գողացել էին) և 1912 թ. փոխադրելով 292 ր. Լուգանսկի հոգաբարձութեան, լրացրել էր այն իր միջոցներով դատից առաջ: Պալատը՝ այդ 292 ր. գործը—ինչպէս և 400 ր. գործը—կարճել էր և տեղեկութիւն տուել Էջմիածնի սինօդին, պարզաբանելով որ 292 ր. լրացված է, իսկ 400 ր. գումարի մասին Հերթեցեան քահանան ներկայացրեց նոյն սինօդից իրան տրված 1910 թ. № 1221 վկայականը, որ քահանան փոխադրել է 1902—1904 թ. թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիւանատուն 370 ր.:

Էջմիածնի սինօդը վաւերացնելով այն, որ արդարև Հերթեցեան քահանայից ստացված է 370 ր., վերադարձրել էր գործը նորից պալատ, բացատրելով որ ստացված 370 ր. չը պէտք է խառնել 400-ի հետ: Սինօդը համոզված է եղել, որ անկախ 370 ր., ես 400 ր. ես հանգանակել եմ 33 տուն Լուգանսկի հայ. ծխականներից յատկապէս Էջմիածնի օգտին, բայց չեմ հասցրել պատկանելոյն, ուստի և խնդրել էր շարունակել դատը: Եւ ահա այս տարվայ փետր. 12-ին նորից շարունակվեց դատը և վերջացաւ նրանով, որ ես ինչպէս կայի անպարտ՝ այնպէս էլ մնացի պալատի դատական գործում: Նոյն իսկ Լուգանսկի հոգաբարձական կազմը երդմամբ հաստատեց, որ ես Էջմիածնի օգտին 1904 թ. և ոչ մի կոպէկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ՀԵԳՆԱՆՔԸ

— Բժիշկ, ասացէք, ասացէք, յոյս նշոյլ կա՞յ գոնէ... ասացէք ի սէր Աստուծոյ:

Եւ նա հեկեկում էր...

Դառն է պատկերը, երբ տղամարդը հեկեկում է:

Գարուն էր. նրանք կանգնած էին պարտէզում: Բժիշկը գնաց: Ոտքի տակ տալով թուփ ու խոտ՝ հասաւ պուրակը, նստեց նստարանի վրա, գլուխն առաւ ձեռքերի մէջ, և մտապատկերները պաշարեցին նրան, շարան-շարան անցան մէկը միւսի ետևից... Շուրջը ամեն ինչ լեզու էր առել, խօսում էր...

Մերթ լսվում էր առուակի ձայնը, որը այնքան քաղցր քչքչոցով, երգ ու պարով, քարերին զարնվելով պատմում էր իր առաջին տեսակցութիւնը, առաջին համբոյրը՝ սիրոյ դաշն... Մերթ ծառերն էին սօսափում կամացուկ, շշուկով և մի ուրիշ պատկեր յիշեցնում... Նրանք այնքան կամաց էին խօսում, որ նրանց ձայնը, իւրաքանչիւր խօսքը լսելու համար՝ նայել էր հարկաւոր նրանց... և միայն ինքն էր, որ հասկանում էր, որոշում իւրաքանչիւր շշուկը. Նրանք էլ շատ բան էին ասում և շատ բան թողնում... Գեղեցիկ է նա, համեստ է նա, բարձր է նա, առաքինի է նա, սակայն վաղը չի լինելու. վաղը դու մենակ կը լինես... Այս էր, որ ծառերի տերևները իրար զարնվելով շշնջում էին նրա ականջին... Այս խօսքերն էին, որ նրա գլուխը այրում էին, ինչպէս տաք արճիճ...

Գլուխը բարձրացրեց, բայց արդէն ուշ էր: Այժմ ոստերը պար բռնած՝ գեղեցիկ կերպով ճօճվում էին, և լսվում էր միայն նրանց սօսափիւնը: Նրանք այլ ևս չէին խօսում, «նրա» մասին բան չէին ասում...

Դարձեալ մի նոր ձայն...

Լարեց լսողութիւնը: Առուակն էր նորից քչքչում, իր խոխոջուն ձայնը բարձրացնում... Սակայն այս անգամ մահ էր երգում...

«Խորտակվեց կեանքս,—մտածում էր նա,—երէկ որ ես ամենաերջանիկն էի ամուսիններից, վաղը պէտք է լինեմ ամենադժբաղդը... Այսօր ես նախանձի առարկայ եմ ընտրութեանս համար, իսկ վաղը ինձ միայն կը խղճան...»:

Նետվեց սենեակ, ընկաւ մահճակալի վրա, գլուխը թաղեց սիրածի գրկում...

— Իմ անմահ, իմ պարծանք, հոգուս նեցուկ, կեանքիս պալատն, խօսի՛ր, պատասխանի՛ր... Շուտով կառողջանաս, բժիշկն ասաց... Նորից երջանիկ կապրենք...

Շատ բան ասաց, շատ բան խոստացաւ, միայն թէ առողջանայ, բայց հիւանդը աչքերը յառած մի կէտի՝ լուռ էր:

Անցել էր երեք օր: Գիշեր էր: Ընդհանուր լռութիւնը խռովողը դառը հեկեկանքն էր, յոգնած սրտից բղխող հեկեկանքը...

Զարդարուն դագաղին փարված ամուսինն էր հեկեկողը... Երկու օր ևս, և դիակն անգամ չի լինի... Շուրջը դատարկութիւն, մենակ... Սարսափելի է մենակութիւնը...

Մօտեցաւ պահարանին, որպէս զի բոլոր նկարները հանէ, նրա նկարները: Նա յաճախ էր նկարվում:

— Սիրեցեալս, կեանքս, բաց աչքերդ, տես ահա քո յիշատակարանը, քո երկրորդ ընկերը, կարդա, պաշտելիս, ինչպէս երբեմն էիր անում...

Թրթռում էր:

Տասը րոպէ անց՝ լսվեց կատաղի զոռոց. տեսարանը սրտաճմլիկ էր: Դագաղը դատարկ էր. դիակը ընկած գետնին...

Կեանքի հեգնանքն էր թափվել նրա գլխին... Անշունչ տետրը մի ամբողջ դժոխք էր բացել նրա առաջ, դժոխք՝ քօղարկված վարդագոյն վարագոյրով... 40 տարեկան հպարտ գլուխը տասը րոպէում էր փոխվել, խառն, անկանոն և, որ գլխաւորն է, յանկարծ սպիտակ մազերով ծածկվել...

Ամեն անգամ, երբ բժիշկը մօտենում էր նրան՝ հոգեկան հիւանդների հիւանդանոցում, նա շարժում էր գլուխը, ծուռ վիզը և ողորմելի ձայնով հարցնում.

— Խաբեբայ, դաւաճան, ինչու էիր խաղում պատւիս հետ... բաց աչքերդ, բաց, որ իմ հարուածից փախես...

Բայց նրա դէմքը, ձայնը սպառնանք չէր արտայայտում...

Օլգա Տէր-Սեւադեան

ԾԻՏԸ

(Ի. Տուրգենևից)

Ես վերադառնում էի որսից և անցնում այգու ծառուղով: Շունս վազում էր իմ առջևից: Յանկարծ նա փոքրացրեց քայլերը և սկսեց թաքնվել, կարծես առաջից որսի հոտ առած լինէր: Ես դիտեցի ծառուղու շուրջը և տեսայ մի ջահել ծիտ՝ դեղնաւուն կտուցով և աղուամազոտ գլխով: Նա վայր էր ընկել բնից (քամին սաստիկ ճօճում էր ծառուղու կեչիները) և նստել էր անշարժ, անզօր կերպով տարածելով հազիւ բուսած թևիկները:

Շունս դանդաղ մօտենում էր նրան, երբ յանկարծ՝ մօտակայ ծառից պոկվելով մի պառաւ թխակուրծք ծիտ քարի նման նետվեց ուղիղ նրա դնչի առջև և ամբողջապէս գզգզված, այլայլված՝ յուսահատ և խղճալի ծւոցով մի երկու անգամ ցատկեց դէպի շան լայնաբաց սուր ատամնաւոր երախը:

Նա վրա հասաւ փրկելու, իր մարմնով հովանաւորելու իր ձագուկին... բայց նրա ամբողջ փոքրիկ մարմինը թրթռում էր սարսափից, ձայնիկը վայրենանում էր և խռպոտում. նա թալկանում էր, նա իր անձն էր զոհում:

Ի՛նչ ահագին հրէշի տպաւորութիւն պէտք է թողած լինէր նրա վրա շունը: Բայց և այնպէս նա չը կարողացաւ իրան զսպել իր բարձր, ապահով ճիւղի վրա... Մի ույժ, աւելի հզօր՝ նրա կամքից, վայր ձգեց նրան այնտեղից:

Իմ Տրէզօրը կանգ առաւ, յետ-յետ գնաց: Երևի նա էլ ճանաչեց այդ ույժը: Ես շտապեցի յետ կանչել շփոթված շանս և հեռացայ ակնածելով: Այո՛, չը ծիծաղէք: Ես ակնածում էի այդ փոքրիկ, հերոս թռչնի առջև, նրա սիրոյ բռնկման առջև:

Սէրը, մտածում էի ես, աւելի հզօր է մահվան երկիւղից: Միայն նրանով, միայն սիրով է պահվում և շարժվում կեանքը:

Մենտօր-Միրաժ

հանգանակած չեմ՝ բացի 370 ր., որից 170-ը հանգանակել էի 1902 թ. Երզրումի երկրաշարժից աղէտեալների համար, իսկ 200-ը՝ 1904 թ. անձամբ տարել եմ Էջմիածին և յանձնել Վեհափառ Հայրիկին, ի նկատի առնելով Մայր Աթոռի ծանր վիճակը, և 200 ր. իմ յորդորմամբ նուիրեց Պօղոս Աճէմեանը։ Ահա գործի ամբողջ պատմութիւնը իր ճշգրիտ կողմերով։ Ես այլ ևս չեմ շօշափում այն խնդիրը, որ սրբազան սինոդականները հոգեկան հանգիստ տրամադրութեամբ, ամեն մի թերի քննութեան նշանակութիւն տալով՝ իրանց ուխտին նուիրված սպասաւորներին իսկոյն յանձնում են ի դատ մարմնաւոր իշխանութեան։ Ես կամենում եմ մի այլ բացասական արժէք ունեցող մեղադրական կէտի պարզաբանութիւնը լսել նոյն սինոդականներից, որպէս զի հասարակութեան համար՝ այն ևս պարզվի։

Սինոդի անդամ և քննիչ իմ գործիս վերաբերմամբ Բաբգէն վ. իր մեղադրական կէտերի շարքում դրել էր և այն, որ իբր թէ ես՝ 1905 թ. Ղալաթայի եկեղեցու համար գնած և կարել տուած 500 ր. վեց ձեռք եկեղեցական զգեստներից օգտվել եմ 200 ր.։ Հարկաւ՝ դա քննիչի անձնական կարծիքն էր, որ յետոյ ընդունվեց և սինոդի կողմից, չը նայած որ ես իր ժամանակին տուել էի Ղալաթայի հայոց ծխատէր Յովհ. ք. Ղազարեանից առանձին շնորհակալութեան գիր՝ զգեստների մասով և զգեստներն էլ մի տարի գործածվելուց յետոյ՝ հ. Բաբգէնի քննութեան նիւթն էին դարձել։

Այժմ միակ խնդիրս նրանումն է, որ սինոդը բարեհաճի հրապարակ բերել այդ 200 ր. հարցը, թէ ե՞րբ և ո՞ր մասի դատական իշխանութեանը նա յանձնել է այդ 200 ր. գործի քննութիւնը և վճիռը, որ այսօր 7 ձիգ տարի է, ինչ նուաստս և ոչ մի տեղից այդ 200 ր. առիթով ոչ քննութեան և ոչ էլ դատի կոչվեցի։ Սակայն երբ սինոդում իմ մասին հարց է բարձրանում, սինոդականները իսկոյն այդ 200 ր. էլ աւելացնում են իմ ենթադրական մեղքերիս վրա։

Յանուն արդարութեան՝ դուք, սրբազան հայրեր, պարզեցէք այդ մութ կէտն ևս, որպէս զի մի անգամ ընդ միշտ վերջ տրվի նման տխուր ենթադրութեանց։

Լուգանսկի հայոց ս. Լուսաւորիչ աղօթատան՝

Նախկին քահանայ Ներսէս Հերթեցեան

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 28 մարտի

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը խորին շնորհակալութիւն է յայտնում պ. Յովհաննէս Սմբատեան Լազարեանին, որ իր մայր Մարիամ Ստեփանեան Լազարեանի միջոցով նուիրեց Ընկերութեանս կովկասագիտական - մարդաբանական գրադարանին 700 կտոր գիրք և երկու արկղ զանազան ձեռագիրներ և նամակներ։ Սրանց մէջ գտնվեց Մելիք-Շահնազարեանների տոհմի պատմութիւնը, որ շուտով կը հրատարակվի Ընկերութեան «Նիւթեր հայ մելիքութեան մասին» հրատարակութեան շարքում։

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
Անդամ քարտուղար՝ Ե. Լալայեան

Թիֆլիս, 26 մարտի

Ստացայ յօգուտ Գայեանեան դպրոցի ճաշարանի տիկ. Գայիանէ Խունունցից 10 ր., որի համար յայտնում եմ տիկնոջը շնորհակալութիւն։ Մարիամ Յարութիւնեան

Թիֆլիս, 24 մարտի

Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը յայտնում է իր շնորհակալութիւնը նոյն եկեղեցու միաբան աւագ քահանայ տէր-Ներսէս Ղամազեանին Թանդոյեան ս. Շուշանիկեան դպրոցի գրադարանին նուիրաբերած հետևեալ պարբերական հրատարակութիւնների համար. «Արարատ» (29 տ.), «Նոր-Դար» (15 տ.), «Լումայ» (9 տ.), «Մշակ» (5 տ.), «Արձագանք» (2 տ.), «Վարժարան» (2 տ.), «Աղբիւր» (2 տ.), «Մուրճ» (1 տ.), «Ծռաքաղ» (1 տ.)։ Հոգաբարձութիւն

Թիֆլիս, 19 մարտի

«Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնը ի յիշատակ իր հովանաւորող նորոգ հանգուցեալ Զարուհի Նազարեանի նուիրաբերում է Զգրաշէնի ծխ. երկսեռ դպրոցին՝ սկսած այս թւականի յունվ. ամսից «Աղբիւր-Տարազ» ամսագիրներն իրանց պրեմիաներով և յաւելուածներով մշտապէս՝ մինչև այդ հրատարակութիւնների խափանվելը։

Զգրաշէնի երկսեռ ծխ. դպրոցի մանկավարժական խորհուրդն այդ թանգագին նուէրի համար յայտնում է «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան իր խորին շնորհակալութիւնը։

Աւ.-ուսուցիչ՝ Մ. Ասիլեան

Մոսկվա, 15 մարտի

Մոսկվայում սոյն փետրվարին կայացած զոկական երեկոյթից զուտ արդիւնք մնաց 647 ր. 87 կ., որից Վերին Ագուլիսի ուսումնարանին բաժին հանվեց 150 ր., Ցղնային ուսումնարանին 150 րուբ., Ներքին-Ագուլիսի ուսումնարանին՝ 100 րուբլի, Քաղաքիկի ուսումնարանին՝ 50 ր., Կախաւանի ուսումնարանին՝ 25 ր., Կ. Հ. Բ. Ընկ. Վերին-Ագուլիսի ճիւղին՝ 100 ր. իսկ մնացորդ 72 ր. 87 կոպ. յատկացվեց՝ Գողթան դպրոցական ֆոնդին։

Նախագահ կազմակերպիչ յանձնաժողովի՝
Կարէն Միքայէլեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽԱՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Երզրում, 7 մարտ

Ի լրումն ամենայնի Ռոստոմ-Ազամալեան դաշնակցութիւնը Սանասարեանի մանկավարժական խորհրդի անուամբ յայտարարեր է բարձր դասարաններու աշակերտաց, որ անոնք իրաւունք չունին այսուհետև եկեղեցին մէջ դպրութիւն ընելու։ Աշակերտաց ծնողները չափազանց յուզուած են այս կարգադրութեան համար և կրօնի դէմ հալածանք կը նկատեն վերոյիշեալը՝ դաշնակցութեան կողմէ։

Կըսուի, թէ այդ մասին շատերը դիմում ըրած են առաջնորդին և Թաղական խորհրդին։ Աշակերտները կը շարունակեն յաճախել եկեղեցի՝ առ ոչինչ համարելով նման յայտարարութիւնները. անոնք ալ ժողովրդական յուզումը ի նկատի ունենալով՝ ստիպուած են լռել ու որոշումը չեղեալ կը նկատեն։

Նոր-Սանասարեանը նորէն տեղաւորուեցաւ ազգային շէնքին մէջ։

Ամիսներ առաջ, երբ հայ հասարակութիւնն և ուսումն. խորհուրդը կը ճգնէր ապացուցանել, որ Սանասարեանի հին արհեստանոցը գեղեցիկ դասարան կըլլայ, թայֆայականները որոշ նկատումներով չէին համաձայնիր։ Իրազեկ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Նոր վարչութիւնը

Կ. Պոլիս, 17 մարտ

Այս ուրբաթ օրը կարելի եղաւ նոր վարչութիւն մը կազմել։

Նախորդ քուէարկութիւնը չեղեալ համարուելով բոլորովին նոր քուէարկութիւն մը կատարուեցաւ և արդիւնքի մը կրցաւ հասնիլ այս անգամ։

Վերջին շաբթուան ընթացքին կատարուեցան կարգ մը խորհրդակցութիւններ երեսփոխանական շրջանակներու մէջ և դաշնակցականներէն զատ միւս խմբակցութիւնները կրցան իրարու հետ համաձայնիլ, և միայն այդ կուսակցութիւնն է, որ մեկուսացաւ, վասն զի ազգին մէջ ոչ ոք մնացած էր իր համերաշխական խոստումներուն հաւատք ընծայող։

Այս համաձայնութեան հետևանօք ազգ. ժողովի ազատական խմբակցութենէն երկու անձ (Արամ Հալաճեան և Սմբատ Քեաթիպեան), հնչակեաններէն միայն մէկ անձ (Ներսէս Զաքարեան) կառնուէր, իսկ միւսները կը պատկանէին կեդրոնին կամ գէթ անոր գաղափարներուն արտայայտիչը կըրնային ըլլալ։

Սակայն իր ամբողջութեան մէջ առնելով ներկայ քաղաքական ժողովը՝ մեծագոյն մասամբ նորերէ բաղկացեալ է և այնքան զօրաւոր մարմին մը չէ, վասն զի բոլոր դիրք ու անուն ունեցող թեկնածուները յամառօրէն և անդրդուելի եսասիրութեամբ մը ու դատապարտելի ազգուրացութեամբ մը մերժեցին պաշտօն ստանձնել։

Նախորդ շաբթուան բացասական արդիւնքէն յետոյ, ասիկա մխիթարական արդիւնք մը կրնայ համարուիլ։

Շատ փափաքելի էր, որ ամեն կերպով զօրաւոր վարչութիւն մը միայն ըլլար պաշտօնի գլուխ, մանաւանդ որ ամեն խմբակցութեանց կողմէ ալ մասնաւոր տրամադրութիւն մը կար այդ տեսակ վարչութեան մը ոյժ տալու համար։

Մասնաւորապէս արդի պարագաներուն մէջ առաջին փնտռուած բանը վարչութեան անդամներուն անկախ դիրք ունենալն էր և այս տեսակէտով յարմարագոյն մարդիկը կը նկատուէին վարչութեան ատենապետութեան համար դոկտ. Սեղբոսեան և Մկրտիչ Մանուկեան, սակայն անոնք երկուքն ալ չյօժարեցան պաշտօն ստանձնելու։

Ասոնք ունենալով փորձառութիւն, մանաւանդ Սեղբոսեան ըլլալով հմուտ, պրպտող, սկզբունքի տէր և պարկեշտ անձ մը, որ հայկական խնդիրը խորապէս ուսումնասիրած ըլլալով, կրնար շատ օգտակար ըլլալ։

Իսկ Մկրտիչ Մանուկեան ծանօթ անուն մը ունի թէ ազգային և թէ առևտրական շրջանակներու մէջ, և անաղարտ անուն մըն էր։

Ասոնք բնաւ չստանձնեցին այդ պաշտօնը, որով դիմում եղաւ աւելի անփորձներու, որոնք նոյնպէս անկախ դիրք ունին։

Քաղ. ժողովին ընտրութեան նախընթաց պարագաներուն մէջ շահեկան դրուագ մըն էր նաև Օրմանեան սրբազանի դէմ ցոյց տրուած հակառակութիւնը և զայն կրօն. ժողովէն հրաժարեցնելու պայմանը, որ դաշնակցականները կը դնէին։ Այս առաջարկը բոլորովին մերժուեցաւ, և Օրմանեան սրբազան, որ մտադիր էր հրաժարիլ, հիմա ոմանց կամքին չհնազանդելու համար ստանձնեց կրօն. ժողովի անդամակցութիւնը, և հաւանական է, որ նոյնիսկ ատենապետ ընտրուի նոյն ժողովին։

Հետևաբար կրօն. ժողովը կունենայ արտակարգ կերպով զօրաւոր կազմ, և իր այդ զօրաւոր կազմովը կրնայ մեծագոյն օժանդակը ըլլալ քաղ. ժողովին, որուն անդամները պիտի օգտուին իրենց կղերական անդամներու հմտութենէն և փորձառութենէն։

Նոր վարչութեան գլխաւոր առաւելութիւնը հոն է, որ ազգային կեդրոնական իշխանութիւնը դաշնակցականաց ազդեցութենէն փրկուած է, մինչ ասկէ առաջ բոլորովին անոնց ազդեցութեան ենթարկուած էր։

Զաւէն պատրիարք մինչև հիմա բոլորովին շրջապատուած այս մարդոցմէն՝ ծանր դժուարութիւններ կը կրէր շարունակ այդ ազդեցութեան դէմ պայքարելու համար։ Մասնաւորապէս մէրուական խնդրոյն մէջ իր բռնած ճկուն դիրքը, այլ սակայն յըստակ ուղղութիւնը, որ քօղամերկ ըրաւ Դաշնակցութեան շահախնդրական ընթացքը, գնահատուեցաւ ամեն կողմէ։

Նոյնպէս մի քանի թաղային խնդիրներու մէջ ցոյց տուած կտրուկ ընթացքը, վճռական տնօրէնութիւնները, մասնաւորապէս ազգ. Կեդր. վարժարանի ուսանողութեան դասադուլին դէմ իր ձեռք առած վճռական քայլերը կը գնահատուին շատերէ։ Եւ որովհետև անօրինակ կերպով մը կաշխատի խնդիրները ուսումնասիրելու, ուստի իր այդ յամառ աշխատութեամբ լաւ առաջնորդ մը կրնայ դառնալ վարչութեան և անոր գործը մեծապէս դիւրացնել։

Էական մասը, պարկեշտ մարդիկ վարչութեան մէջ դնելու սկզբունքը, փրկուած էր, քանի որ այդ մասին ոևէ տարակոյս գոյութիւն չունէր, մինչ նախորդ վարչութեան անդամները եթէ կարող մարդիկ ալ էին, զուրկ էին պարկեշտ մարդիկ ըլլալու նուազ էական յատկանիշէն։ Գոնէ Տիրան Երկանեանի պէս անձեր չկան ներկայ վարչութեան մէջ, որոնք անպարկեշտօրէն շահագործեն իրենց պաշտօնը այնքան տխուր կերպով մը՝ և իբր բնական ու պարզ բան մը, ճակատաբաց ալ պարծին իրենց արարքովը։

Եւ այս մեծ բան մըն է։ Շառայլ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈԹԵՐ

IV

Լսեցէք, արար-աշխարհ, պարսիկ կառավարութիւնը հոգ է տանում ժողովրդի առողջապահութեան մասին։ Արգելվեց դեղատներին մօրֆինի գործածութիւնը։ Աւելի դառն հեգնութիւն կարելի՞ էր երևակայել։ Բաւական չէ, որ նոյն մօրֆինի տեղական անմաքուր արդիւնաբերութիւնը իր ձեռքն է առել կառավարութիւնը և աշխատում է որքան կարելի է շատ տարածել աֆիոնի (թրեաքի) գործածութիւնը (ծխելով կամ կուլ տալով), այլև ամեն քաղաքում յատուկ պետական պաշտօնեաներ է կարգել, որոնք ժողովում են մի անգամ արդէն զանազան բերաններով ծխված ծխամորճերը, դանակով քերում այդ ծխամորճերին կպած թրեաքի անմաքուր մնացորդները և յօգուտ պետութեան նորից վաճառքի հանում. այդպիսով ոչ միայն նոյն մօրֆինի ազդեցութիւններով են թունաւորում ժողովրդին, այլև դրա միջոցով սիֆիլիսն ու բորոտութիւնն ազատօրէն տարածում։ Պետութիւնը մտածում է ժողովրդի առողջապահութեան մասին։ Բա՛ հեգնութիւն չի...

V

Մէջլիսի ընտրութիւնների հետ միասին նորից երևան են եկել բանջարաբուսակի պէս պարսկական կուսակցութիւնները Թեհրանում. նորից՝ ժողովներ, խորհրդածութիւններ, թռուցիկներ, թերթեր. և այդ բոլորը ոչ թէ սկզբունքների՝ պրինցիպների, գործիլակերպ-պլատֆորմաների համար, այլ... լաւ-լաւ, չաղ-չաղ պաշտօններ ձեռք ձգելու՝ իրանց և իւրայինների համար...

Հայկական «պլատֆորմայական» տղէրքն էլ կամաց-կամաց մութ խորշերից իրանց գլուխը դուրս են հանում և գործունէութեան նշոյլներ ցոյց տալիս. օրինակ՝ անցեալները Թեհրանում, տղէրքից մէկը փողոցի մէջ տղէրքից մի ուրիշին գնդակահարեց, որից յետոյ միացեալ տղէրքը հաւաքվեցին և փառաւոր հանդէսով, զինուորական երաժշտութեամբ, աստուածացնող ճառերով թաղման կարգ կատարեցին։ Յայտնի տղէրքից մէկը քառասմբակ ձիով գնաց հասաւ Սպահան, յարձակվեց հայոց առաջնորդարանի վրա և քիչ մնաց խեղճ Եղնիկ վարդապետին էլ Թոխմախեան վարդապետի գնացած ճանապարհն ուղարկէր, որ ձերբակալվեց և յանձնվեց սակայն ռուսաց հիւպատոսարանին։ Տղէրքից մի երրորդը, երբ թէ ժամանակցութիւն է ունեցել ուսուցիչ Արշալոյսի սպանութեան մէջ, իր ընկերների կողմից յանձնվել է ռուսաց դեսպանատանը և պահակներով ուղարկվել Ռուսաստան դատվելու։ Ձերբակալվածը իւրաքանչիւր քաղաքում հայեր տեսնելիս, սկսում էր բարձրաձայն հայհոյանքներ թափել իր նախկին ընկերների հասցէին։ Մի խօսքով, Պարսկաստանումն էլ սկսվել է «տղէրքի» նոյն գործունէութիւնը, ինչ-որ մի ժամանակ Բագւում, «կանաչ հարիւրեակի» շրջանում...

VI

Շուրջ երեք տարի Պարսկ.-Հնդկաստանի թեմը զրկվել է թեմակալից և մեր բոլոր խնդիրներն ու թախանձանքները մնում են «ձայն բարբառոյ յանապատի»։ Վարդազարեանին ուզեցինք՝ չը տուին, պահեցին, որ վարկաբեկեն. Գարեգինին և Բենիկին ուզեցինք՝ «իրանց մարդիկը» չեն, չը տուին. երևում է, «իրենցից» էլ յարմարաւոր մարդ չը կայ։

Դ ա զ վ ի ն Մար.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թաւրիզից նորից տեղեկացնում են, որ վերջին ժամանակներս թիւրքաց զօրքեր են բանակում թիւրք-պարսկական սահմանագլխում։

◆ Կ. Պոլսում, բացի ռուս-թիւրքական, թիւրք-գերմանական ընկերութիւններից՝ հիմնվել է նաև ֆրանս-թիւրքական ընկերութիւն, ծովային մինիստրի նախագահութեամբ։ Ընկերութիւնը ջանալու է առաջին հերթին գլուխ բերել թիւրքական փոխառութիւնը Ֆրանսիայում։

◆ Ֆրանսիական հանրապետութեան պրեզիդենտ Պուանկարէն Պետերբուրգ կը ժամանէ յուլիսի 9-ին (22-ին) և կը մնայ չորս օր։

◆ Անգլիական արտաքին գործերի մինիստր սըր Գրէյը դիմեց Ռուսաստանին և Ֆրանսիային պաշտօնական առաջարկութեամբ, որպէսզի այսուհետև Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան իրանց բոլոր դիւանագիտական քայլերը կատարեն միմիայն միասին ու համերաշխօրէն։ Սըր Էդուարդ Գրէյի այս առաջարկութիւնը մեծ համակրութեամբ ընդունվեց Պետերբուրգում և Պարիզում։

◆ Պարիզից հեռագրում են, որ միացեալ սօցիալիստների կուսակցութիւնը աշխատում է պարլամենտի համար պատգամաւոր ընտրել Նոտր-Դամի կողմից՝ յայտնի ռուս էմիգրանդ Բուրցևին։

◆ Թաւրիզից հեռագրում են, որ Շուջա-ուդ-Դովլէի դէմ սկսված արշաւանքը մեծ թափով շարունակվում է։ Ամեն օր քաղաքի պատերին կպցվում են թռուցիկներ, որոնք ուղղված են արդի պարսկական պետական իրաւակարգի դէմ։ Ագիտացիան սպառնում է լուրջ դէպքերի յանգել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պօստ-արկղների թիւը ամբողջ աշխարհում։ — Վերջապէս վիճակագրութիւնը շօշափեց և պօստ-արկղները։ Համաշխարհային պօստային միութիւնը իրան նպատակ դրեց իմանալ թէ որքան է պօստ-արկղների թիւը բոլոր կուլտուրական երկիրներում։ Պօստ-արկղներն էլ իրանց հերթին որոշ չափով պարզում են երկրի քաղաքակրթութիւնը, ինչպէս սալօնի գործածութիւնը, լրագիրների տարածումը և այլն։ Այդ բանում առաջին տեղը պատկանում է Գերմանիային, որտեղ պօստ-արկղների թիւը հասնում 175,000-ի, իսկ Միացեալ Պետութիւններում և Հիւսիսային Ամերիկայում՝ 144,000-ի։ Մնացած կուլտուրական երկիրներում պօստ-արկղների թիւը 100,000-ից պակաս է։ Ֆրանսիայում դրանց թիւը հասնում է 79,000-ի, Բրիտանական Հնդկաստանում՝ 75,000-ի, Անգլիայում՝ 71,900, Եապօնիայում՝ 67,000, Աւստրիայում՝ 44,000, Իտալիայում՝ 39,000, Ռուսաստանում՝ 31,700, Ունգարիայում՝ 15,000, Շվէյցարիայում՝ 13,400, Դանիայում՝ 12,000 և Բելգիայում՝ 11,000։ Այնուհետև գալիս են այն երկիրները, որոնց մէջ պօստ-արկղների թիւը 10,000-ից պակաս է։ Ինչպէս օրինակ Սպանիայում՝ 9000, Հոլանդիայում՝ 6200, Պորտուգալիայում՝ 6100, Նորվէգիայում՝ 5200, Ռումինիայում՝ 4800, Հարաւային Աֆրիկայում՝ 4400, Բուլղարիայում՝ 3300, Արգենտինիայում՝ 2000, իսկ Պարսկաստանում ընդամենը 13 արկղ և Աբիսինիայում՝ 6։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

53 տարեկան եւ 54.

Ես և կինս մի քանի տարի հիւանդ էինք ստամոքսի կատարրով, իսկ այժմ, շնորհիւ «Դ-ր Մէյէրի Ստոմոխիգէնի», մեր ստամոքսները բոլորովին դրստվեցին։ Ձեզ չը գրեցի նրա համար, որովհետև սպասում էի բուժումը աւարտելուց յետոյ մի քանի ամիս անցնէր։ Անցնելով յիշեալ ժամանակամիջոցը՝ կատարեալ կերպով կարող եմ ասել, որ ձեր պրէպարատը հրաշալի դեղ է ստամոքսի կատարրի դէմ և գլխաւորապէս բուժում է մարսողական բոլոր հիւանդութիւնները։ Ես 53 տարեկան եմ, իսկ կինս՝ 54. Յայտնում եմ այս նրա համար, որ շատ կարելի է՝ որևէ մէկը կը մտածէ, թէ այդ հասակում յիշեալ դեղը անզօր է. թող իմանայ ուրեմն, որ ինքը սխալվում է։ Ընդունեցէք խորին շնորհակալութիւնս։ Ցանկանում եմ Ստոմոխիգէնի տարածումը յօգուտ մարդկանց։ Ուսուցիչ Ն. ԳՐԻԴԻՆ. Սարանսկ. Պենզայի նահ.։

Ձրի դեղատոմս. — Վերցրէք մօտակայ դեղատնից «Դ-ր Մէյէրի Ստոմոխիգէնից» մի տուփիկ և ընդունէք 1—3 թէյի գդալ օրական 3 անգամ, մինչև որ ձեր ստամոքսը կանոնաւորվի։

Իսկական Ստոմոխիգէնի իւրաքանչիւր արկղիկի վրա փակցված է հետևեալը. «Издѣліе Лабораторіи Доктора Антона Мейеръ, С.-Петербургъ, Екатерининскій каналъ, 29». Եթէ անունը, խեղաթիւրված է կամ լրիւ չէ գրված (Докторъ Антонъ Мейеръ), եթէ հասցէի մէջ թւանշանը փոխված է, այդ դէպքում պէտք է գիտենալ, որ բացարձակ կեղծիք է կատարված։

6000 ՌՈՒԲ.

կանխիկ դրամով Դ-ր Անտոն Մէյէր կը բաժանէ Ստոմոխիգէնով օգտվողների միջև։ Իւրաքանչիւրը բաժին կը ստանայ։

Մանրամասնութիւնները և դրամը երբ տալու մասին կարելի է տեղեկանալ բոլոր դեղատներում և դեղավաճառ խանութներում։

(П. 33183)

„Մշակի" խմբագրատանը վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան Նեցուկները, Հ. Իբսէնի, Թարգ. Լ. Բաբայեանի	50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք-ի	40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի	60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի	50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Առաքելեանի	50 կ.
6) Մազեպա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի	40 կ.

№ 4711
ՖԵՐԴ. ՄՈՒԼՀԵՆՍ
Փարֆիւմէրիա № 4711.
ԿԵՕԼՆ—ՌԻԳԱ.
Հիմն. 1792 թ.
Մատակ. Ն. Կ. Մեծ. Դրան
Ծախվում է ամենուրեք։

ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿ
ԸՆԿՈՒԶԵԱՅ ԷԿՍՏՐԱԿՏԻՑ

այն առաւելութիւնն ունի, որ նա միանգամայն անվնասակար է։ Ներկում է սպիտակ, շէկ և ամեն գոյնի մազերը արագ և հիմնաւոր կերպով։ Իւրաքանչիւրը կարող է № 4711 ներկով իր մազերին տալ նրանց նախկին, բնական գոյնը։

Գործածելու եղանակը կցված է իւրաքանչիւր սրուակին։ Ծախվում է թէ սև, թէ շագանակագոյն, թէ մութ և թէ բաց-խարտեաշ գոյներ։

1 սրուակը 1 ր. 20 կ. և 2 ր.։
(М. 544854) 8—7

ՄԱՐՄԱՐԵ-ՄՕԶԱՅԻԿ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
Բ. Պ. ՎԻԼԼԱՑԻ
Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 63, սեփական տ.: Телефонъ 6—20.
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ
մարմարեայ, քարէ եւ մօզայիկ աշխատանքների համար:
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
պատրաստի արձաններ լաբրադորից և տեղական կարրարեան մարմարից։
Ծեփումն շինութիւնների ֆասադի—արհեստական քարով։
(չ.ու.կ.) 271. 10—2

ԳՈՅՔԵՐԸ ԿՐԱԿԻՑ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ 1913 թ. տարեկան հաշիւը Ընկերութեան գործերի դրութեան մասին, դոկումենտներով և գրքերով, համաձայն կանոն. § 36-ի, ցուցադրված է Վարչութեան դիւանատանը՝ ապահովագրող անձերի քննութեանը ենթարկելու նպատակով։

289. 1—1

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ
հետևեալ աշխատութիւնները՝

1) «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» (էջ 6000, 25 հատոր) գինը 50 ր., հատորը 2 ր.։
2) «ՍԱՍՄԱՅ ԾՌՆԵՐԻ ՑՈՒՑԻԿՆԵՐ» (500 էջ) գինը 2 ր.։
3) «ԳՌՈՂԻ ՎԻՃԱԿԸ» (պօէմա) գինը 1 ր.։
4) ՃՕՃԿԱՆԵՑԻ ԽՈՒԴԻՆ «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։
5) ԳԻՒՂԻ ՀԵՐՈՍԸ «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։

Հեղինակի հասցէն՝ Эривань, Астафьевская № 42, магазинъ Михаила Антонянцъ, переслать сел. Башкендъ, старш. учителю Григорію Баласанянъ. (օ.մ.) 271. 10—3

Սրտագին շնորհակալութիւն

Ձեր տուած խորհրդի և բժշկելու համար։ «Բիօլ-Լասլէյը» կը յանձնարարեմ նաև այլոց, որոնք կը կամենան բժշկվել զանազան ախտերից, որոնցով ինքս ևս տանջվում էի երկար տարիներ։ Ես ինձ վերաստեղծված եմ զգում, և կրկին անգամ յայտնում եմ իմ շնորհակալութիւնը Ձեր «Բիօլ-Լասլէյ» թանգագին դեղի համար։ Ուղարկում եմ Ձեզ իմ լուսանկարը։

Յարգանքով՝ Ա. Ն. Նօվիկօվ

Եթէ Դուք հիւանդ էք ընդհանուր կամ սեռական թուլութեամբ, ունէք գլխացաւ, անքնութիւն, արեան պակասութիւն, տանջվում էք օնանիզմից ու նրա հետևանքներից, ունէք վախկոտութիւն, թոյլ յիշողութիւն, վեներակ. հիւանդ. հետևանքներ, եթէ Դուք ջղային էք, գրգռվող, յոգնած, խնդրեցէք դեղատանը մի տուփ «Բիօլա», սակայն իսկական «Բիօլա-Լասլէյ»։ Դուք փայլուն հետևանքներ կը ստանաք։ Դա յայտնի դեղ է նէվրաստէնիայի դէմ և միանգամայն անվնասակար է։ Տեղեկ. համար կարելի է դիմել՝ С.-Петерб. отд. 3 частн. почтов. ящ. № 371.

(П. 34087)

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմենօվսկայա փող., № 18 (Վօրօնցօվի արձանի մօտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում։ Բժշկի բնակարան Սեմենօվսկայա, № 16.

(չ. ու. կ.) 804. 100—72

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.

Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրոտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։

Տէլէֆօն № 388.

(ա. օ.) 112. 100—36

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, (Եռլիխի 606 և 914-ով) միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։

Ընդուն- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Աղքատ համար՝ 2—3 ժ. ցեր.։

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փող.), տէլէֆօն 11—75.

(չ. կ) 785. 100—59

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հետևեալ գրքերը.

ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕ. «Թշուառները», հ. I գ. 80 կ. հատ. II	գ. 80 կ.
ՕՐՄԱՆԵԱՆ. «Ժամապատում», կազմ.	գ. 3 ր.
» «Ազգապատում», № 18, 19,	գ. 50 կ.
ԹՕՐԱՄԱՆԵԱՆ. «Պատմական հայ ճարտարապետութիւն»,	գ. 1 ր. 50 կ.
ՇԱՆԹ. «Դերասանուհին»,	գ. 50 կ.
» «Վերժին»,	գ. 60 կ.
ԱՏՐՊԵՏ. «Խիլաֆաթ»,	գ. 50 կ.
ԱՀԱՐՕՆԵԱՆ. «Մրրիկի սուրբը»,	գ. 1 ր.
» «Իտալիայում»,	գ. 1 ր. 50 կ.
ՇԻՐՎԱՆԶԱԴԷ. «Նամուս», վէպ	գ. 75 կ.
ԱՏՐՊԵՏ. «Բժժանքներ», վէպ.	գ. 1 ր.
» «Վիշապամայր»,	գ. 20 կ.
ԱՂԱՅԵԱՆՑ. «Արութին և Մանուէլ»,	գ. 60 կ.
ԹՈՒՄԱՆԵԱՆ. «Քաջ Նազարը»,	գ. 40 կ.
ՏԷՐ-ԽԱՉԱՏՐԵԱՆ. «Բաղդը ինչումն էր»,	գ. 8 կ.
ԼՈՒԿԱՇԵՎԻՉ. «Աղքատ դպրոցականը»,	գ. 10 կ.
» «Օրբ Աննան»,	գ. 12 կ.
ԴՕՍՏՕԵՎՍԿԻ. «Ցիսուսի տօնածառը»,	գ. 10 կ.
ՍԷՅՐԻ. «Դերիկ կամ դէպի անմահութիւն»,	գ. 15 կ.
ՈՒԻԴԱ. «Փոքրիկ Հայրիկի պարտէզը»,	գ. 15 կ.

Օտար քաղաքներից դիմել՝ Въ Тифлисъ, Центральная книжная торговля.

287. 1—1

Փուկանո-մեխանիկական

= ԱՐՀԵՍՏԱՆՈՑ =

ՉԱՅՐՎՈՂ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ

= ՎԵՐՆԵՐ ՊՖԵՅԼ =

Վօկզալնայա փ. № 3.

(օ. մ.) 100. 100—21

ՀՐԱՒԷՐ

Հավլաբարի Ս. ԿԱՐԱՊԵՏ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը խնդրում է նոյն եկեղեցու չափահաս ծխականներին շնորհ բերել կիրակի, մարտի 30-ին, ցերեկվայ ժամը 11-ին երկրորդ և վերջին ծխական ընդհանուր ժողովի։

Զբաղմունքի խնդիրներն են՝

1. Դպրոցի համար նոր շէնք կառուցանելու հարցը.
2. Ընթացիկ հարցեր։

Հոգաբարձութիւն

284. 2—2

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

հին գորգեր, պատուհաններ, տախտակներ, աղիւս և այլն։ Դիմել՝ Сололакская № 13.

285. 2—2

ԱՇԽԱՐՀԱԾԱՆՕԹ

ԿՐԵՄ ԿԱՋԻՄԻ

ՄԵՏԱՄՈՐՖՕԶԱ


APPROUVÉE PAR LE DÉPARTEMENT DU COMMERCE ET DES MANUFACTURES
LES TACHES DE ROUSSEUR
METAMORPHOSA
Cattini

Միակ ճանաչվածը ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ կանանց կողմից։ Անպայման արմատապէս հեռացնում է երեսի բծիկները, բշտիկները, մուները, այրուածքները, կնճիռները և այլ դէֆէկտները։

(П. 44116) 5—1

I ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ

Նիկօլայեվսկի կամուրջ, 20—30

Սրանով յայտարարում եմ Թիֆլիսի յարգելի հասարակութեան, որ ստացված է տղամարդկանց, կանանց եւ երեխաների բազմազան հագուստեղէն, ամենավերջին տարազի:

Որպէս զի հետեւեալ սեզօնին չը մնայ խանութի ապրանքը, մենք նշանակել ենք

ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ 60% ԶԵՂՉՈՎ

Խանութում գտնվող բոլոր ապրանքների գները նշանակված են կապոյտ մատիտով և **ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ**։ Էժան վաճառքի ժամանակ գնված ապրանքները չեն վերադարձվում։

Մնում եմ յարգանքներով Փիրմայի կառավարիչ՝ Ա. ՂԱԴԱԿՉԻԵԱՆ

(ու. կ. չ.) 255. 10—5

Թիֆլիսի Առեւտրական Նաւարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սրանով խնդրում է պ. պ. բաժնետէրերին ներկայ լինել

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ տեղի կունենայ ներկայ 1914 Թ. ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի Բօրսայի շինութեան մէջ (Պուշկինսկի փող. № 5)։

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Վարչութեան զեկուցումը.
2) Վարչութեան զեկուցումից առաջացող հարցերի վճիռը.
3) Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը.
4) Քննութիւն և հաստատութիւն 1913 Թ. հաշւի և հաշւեկշռի.
5) 1914 Ծւի ծախքերի նախահաշիւը և գործունէութեան նախագիծը.
6) Կարգաւորումն 1913 Թ. օգուտների.
7) Վարչութեան մէկ անդամի ընտրութիւն՝ ի տեղի հերթով հեռացող անդամի, և վարչութեան մէկ անդամի թեկնածուի ընտրութիւն.
8) Վերստուգող յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւն.

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ պահանջված ձայների թւի պակասութեան պատճառով, այդ դէպքում երկրորդ ժողովը կը նշանակվի ապրիլի 13-ին 1914 Թ. նոյն տեղում, առաւօտեան ժամը 11-ին, որպիսի ժողովը կը համարվի օրինական՝ որքան անդամ էլ ներկայ լինի։

Վարչութիւնը պ. պ. բաժնետէրերի ուշադրութիւնն է հրաւիրում Ընկերութեան կանոնադրութեան § 59-ի վրա։

Անուանական ակցիաների տէրերը օգտվում են Ընդհանուր Ժողովում ձայների իրաւունքով միայն այն դէպքում, եթէ նրանք՝ գոնէ 7 օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը՝ մտցված են վարչութեան մատեանների մէջ, որի համար և Ընդհանուր Ժողովին մասնակցելիս չէ պահանջվում ներկայացնել անուանական ակցիաները։

Ակցիաները ներկայացնողին ձայնի իրաւունք է տրվում այն դէպքում, եթէ նոյն ակցիաները ներկայացված են Ընկերութեան վարչութեանը՝ գոնէ 7 օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը և յետ տրված մինչև ժողովի աւարտը։ Բնագիր ակցիաների փոխարէն կարելի է ներկայացնել վկայագրեր (ստացագրեր) ակցիաները ի պահեստ կամ գրաւ դրված լինելու համար ինչպէս պետական, նոյնպէս և կառավարութեան հաստատած կանոնների հիման վրա գործող կրէդիտային (տեղական և օտար քաղաքների) հիմնարկութիւնների, այլ և արտասահմանեան կրէդիտային հիմնարկութիւնների և բանկային տների կողմից ստացված, որոնք ընտրված կը լինեն բաժնետէրերի Ընդհանուր Ժողովներից և հաւանութիւն գտած փինանսների մինիստրութիւնից։ Վկայագրերի մէջ պէտք է նշանակված լինեն ակցիաների համարները։ Արտասահմանեան բանկային հիմնարկութիւնները, որոնց վկայագրերը կարելի է ներկայացնել փոխարէն բնագիր-ակցիաների, պէտք է նշանակված լինեն Ընդհանուր Ժողովի հրաւէր-յայտարարութիւնների մէջ։

Միաժամանակ վարչութիւնը վաղօրօք յայտնում է պ. պ. բաժնետէրերին, որ ձայնի իրաւունք ունենալու համար տրված հաւատարմագրերը և գրաւոր յայտագրերը պէտք է ներկայացված լինեն վարչութեանը բաժնետէրերի Ընդհանուր Ժողովից 7 օր առաջ, ի նկ. վարչութեան գրասենեակին՝ ցեր. ժամը 11—1-ը։

(կ.) 232. 3—3



ՆՄՈՒՇՆԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Նիկօղայոս I կայսեր քաղաքացիական ճարտարապետների ինստիտուտի պրօֆ. Գ. Դ. Գրիմմի խմբագրութեամբ։ —◆— Կազմեցին

Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ և Ռ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

Այս հրատարակութիւնը լոյս է տեսնում առանձին սէրիաներով, իւրաքանչիւրում մօտ 50 լուսատիպ-տախտակ (39×29 սանտ. մեծութ.) պատրաստած Ռ. Գօլիկէ և Ա. Վիլբօրգ լուսատիպ-գործարաններում (Պետերբուրգում) ռուսերէն, հայերէն և ֆրանսերէն հակիրճ բացատրութիւններով։

Իւրաքանչիւր սէրիան ներկայացնելու է մի ամբողջութիւն, իսկ բոլոր սէրիաները միասին պատկերացնելու են հայկական հին ճարտարապետութիւնն իր բոլոր նշանաւոր կոթողներով։

Տպագրվում է միայն 300 օրինակ։ Լոյս է տեսել առաջին սէրիան, բաղկացած 50 տախտակից, փոքրիկ բնագրով և V—XVIII դարերի հետևեալ վայրերի յիշատակներով— Հաղբատի, Սանահնի, Վաղարշապատի (Էջմիածնի, Գայիանէ, Հռիփսիմէ, Շողակաթ), Ուզունլար, Մօղնու և Աշտարակի։

1-ին սէրիայի գինն է 14 ր., աղնիւ թղթի վրա՝ 24 ր.։

Դիմել—Рубену Мартиросяну. Тифлисъ, Мадатовская № 7.

(կ.) 256. 5—2

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ և ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

(Տեսական եւ գործնական)

Կովկասեան Շերամապահական Կայարանին կից ներկայ ապրիլի 15-ից բացվում են յիշեալ դասընթացքները, որ կը շարունակվեն մինչև յունիսի 1-ը։ Դասընթացքների ունկնդիրները ուսման վարձ չեն վճարում։ Ունկնդրել ցանկացողները կարող են ստորագրվել Կայարանի գրասենեակում ամեն օր, բացի տօն օրերից, առ. ժ. 11-ից մինչև ցեր. ժ. 1-ը։ Տեղեկութիւնների համար անձամբ կամ գրաւոր կարելի է դիմել Կայարանին։ 248. 8—4

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱՄԱՍՆԻ ԳՆԵՐՈՎ

ՄԵԾԱԾԱԽՍ ՊԱՀԵՍՏ ՄՕԴԱՅԻՆ-ԳԱԼԱՆՏԵՐԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ՓՈՒՂԻՆՕՎ, ԱԼԻԽԱՆՕՎ ԵՒ ԿՕ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ՏՈՒՆ № 11.

●●●●●● ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ●●●●●●

մեծ քանակութեամբ ընտիր

●●● ՀՈՎԱՆՈՑՆԵՐ ●●●

և տղամարդկանց ու կանանց սպիտակեղէն։ Ամեն օր ստացվում են սեզօնային մօդային ապրանքներ—ինչպէս ռուսական, նոյնպէս արտասահմանեան։

(կ. ու.) 241. 5—5

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱՄԱՍՆԻ ԳՆԵՐՈՎ

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱՄԱՍՆԻ ԳՆԵՐՈՎ

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱՄԱՍՆԻ ԳՆԵՐՈՎ

ԱՄՍԱԿԱՆ 100 ՌՈՒԲ. ԵՐԱՇԽԱՒՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

կարող է ունենալ իւրաքանչիւր տղամարդ կամ կին՝ աշխատելով յարմար կերպով իր բնակարանում։ Հեռաւորութիւնը խոչընդոտ չէ լինում։ Պայմանները ուղարկում ենք ձրի։ 1-е Западное Т-во Вязальныхъ издѣлій. Варшава, Капудинская 13—7. (կ.) (В. 15412) 0—5

ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿ

ՀԻՊՆՕՏԻԶՄ ԵՒ ՆՈՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՆՑ ՈՒՍՈՒՑՉԻ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՇԵՔԵՐՋԵԱՆԻ

Այս նոր ձեռնարկը կոչվում է

«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄՏՔԻ ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ»

Այս նոր ձեռնարկով ամեն ոք, ով հայերէն լեզուին ծանօթ է, կարող է սովորել հիպնօզացնել. ներշնչել և սովորել նոր-հոգեբանութիւն, և գործադրել նրան իր ամենօրեայ գործերում։ Այս նոր ձեռնարկի արժէքի և ուրիշ բացատրութիւնների համար պէտք դիմել նամակով հետևեալ հասցէով.

Ռուսաստանից—Арутюну Шекерджянъ Вельяминовская ул. № 22 Тифлисъ. Արտասահմանից—Haroutun Shekerjian, 22 Weliaminovskaya, Tiflis, Caucasus, Russia.

(կ.) 193. 25—4

Գործարանը պատրաստում է պատենտային գիդրավլիկ մեքենաներ՝ աւտոմատիկ կերպով ջուր բարձրացնելու համար։ Բազմաթիւ սարքաւորական պարագաներ։ Խոշոր պարգևներ՝ ստացված ցուցահանդէսներում։

ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ

Ինժեներ Գ. Զ. Եարալեան և Ընկ.

Թիֆլիս, Կվերիլսկայա, 9, սեփ. տ.

Ցնօրէնի տէլէֆօն № 9, Կառավարչի բնակարան 14—78.

ԳՈՐԾԱՐԱՆԸ ՍՏԱՆՁՆՈՒՄ Է ԼՐԻՒ ՍԱՐՔԱՒՈՐՈՒՄՆ

Գիդրօ-շոգե-նաւթա-էլեքտր. կայարանների՝ առանձին աւտոմատիկ յարմարութիւններով, որոնք ազատում են կայարանների վերակերմամբ ունենալիք հոգողութիւններից։ Ջրհան, առաջային, սառույց պատրաստող, փոշեմաքրիչ, ջրաբաշխական կայարանների։ Վերանորոգումն և սարքաւորումն ջրաղացների, փայտասղոցարանի, բամբակազտիչ, ձիթհան և աղիւս պատրաստող գործարանների։ Կատարելագործված վերելակների՝ մարդկանց և ապրանքների համար։ **Կառուցում է**—շարժիչներ և մեքենաներ բոլոր տեսակի տեխնիկ. և գիւղատնտես. նպատակների համար։ **Կատարում է**—ամեն տեսակ կաթսային, կամուրջային և այլ մետաղային աշխատանքներ։ **Պատրաստում է**—արտասահմանեան փիրմաների նորագոյն ձևերով շքեղ զարդաններ, ցանկապատներ, պատշգամբներ, բակեր և այլն։ Նախագծեր և նախահաշիւներ բոլոր մասնանշված աշխատանքների համար։

(կ.) 175. 25—3

Գործարանը ձուլում է, համաձայն պատուիրողների մոդէլների և մակարդակների, բոլոր մեքենաների չուգունէ մասերը, մինչև 250 պուդ մի կտորի մէջ, նախնական (обработкой) և առանց նրան։ Չուգունէ շարժիչ-թեւեր, ճախարակներ, ատամնանիւներ և այլն։ Պղնձէ ձուլուածքներ և արմատուրներ։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ

1914 մարտ № 3.

(176 ՄԵԾԱԴԻՐ ԷՋ)

1) Ազատութեան Արշալոյսին՝ Ա-բաս, 2) Սիրում եմ... (բանաստ.)՝ Լէյլի, 3) Գիւղի բժիշկը՝ Վ. Նուբեան, 4) Խայեամ՝ թարգմ. բնագրից Ց. Զ. Միրզայեան, 5) Աստղ աղջիկ՝ Բ. Խաբայեան, 6) Հնաւոր ձայներ (Աշնան երգերից) Ն. Կօրէյկի թարգմ. Զելլօյ. 7) Զատիկը սև (Պատկեր)՝ Ար. Յովհաննիսեան, 8) Կապաշտը (բանաստ.)՝ Լէյլի, 9) Ցուցեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդութիւնից՝ Ա-Դօ, 10) Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, 11) Աւետիք Արասխանեան՝ Ա. Տէրտէրեան, 12) Ստանիսլաւ Պշիբիշեվսկի՝ Սուրխաթեան, 13) ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ 1) Հայկական հարցը և Պօղոս Նուպար փաշան՝ Մ. Ցար. 2) Ե. Ցրանգեան՝ Գերմաներէն-հայերէն բառարան՝ Մ. Ցար. 3) Գէորգ Տէր-Ղևոնդեան (Գէօ-Ղէօ), Աշխարհաշունչ (մատեան հաւաքածու նուէրաւոր)՝ Մ. Ս., 14) ՌՈՒՍ ԿԵԱՆՔ՝ Ա. Ագամեան, ՎՐԱՑ ԿԵԱՆՔ՝ Բ. Տ., 16) ԳԻՏԱԿԱՆ ՔՐՕՆԻԿՕՆ. Աւետիք Տէր-Պօղոսեան, 17) Զախլիկ նկատողութիւններ՝ խմբագրութիւն, 18) Գրքեր և պարբերականներ, 19) Պատկերներ՝ Էրնստ Հէկկէլ, 20) Յայտարարութիւններ, 21) Բովանդակութիւն։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է № 4

Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ՝
Ռուսաստան—տարեկ. 7 ր., կէս տարվ. 4 ր., երեք ամսվ. 2 ր. 25 կ.
Արտասահման » 24 ֆր., » » 14 ֆր., » » 8 ֆր.

Դրամ և նիւթեր ուղարկել հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская № 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

(հ. կ.) 271. 3—3

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Թիֆլիսում միակ ռուսերէն լեզուով լոյս տեսնող, ԱՄԵՆՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ, բժշկական ամսագիր

„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ"-ի

1914 Թ. բաժանորդագրութիւնը.

Ամսագրի նպատակն է՝ հիւանդութիւնների նախազգուշացումն և առողջութեան պահպանումն։

Ամսագրի մէջ, յայտնի բժիշկների աջակցութեամբ, պարզ և հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։

Բաժանորդագինն է ամբողջ տարվայ համար միայն «օրացոյց-բժշկարան» պրեմիայով 1 ր., (վերադիր վճ. 1 ր. 20 կ.), իսկ 3 ՊՐԵՄԻԱՅՈՎ 2 ր.

1-ին պրեմիան պատի գեղեցիկ «Օրացոյց բժշկարան» 1914 Թ., իսկ 2-րդ և 3-րդ պրէմիան բաժանորդների ցանկութեան և ընտրութեան համաձայն կուղարկվեն 2 հատ հետևեալ գրքերից. 1) Домашній лечебникъ (առանձին արժէ 1 ր.), 2) Грѣхи молодости (лечебникъ секр. болѣзней 1 р.), 3) Лечебникъ домашнихъ животныхъ (1 р. 25 к.), 4) Искусственное безплодіе (1 р. 25 к.), 5) Самоучитель гипнотизма (2 р.), 6) (Полный дѣловой письмовникъ (1 р.), 7) Поваренная книга для хозяекъ (1 р.). Պրէմիաները պատրաստ են և կուղարկվեն բոլորովին ձրի լոյս տեսած համարների հետ՝ բաժանորդագինը ստանալուց անմիջապէս։

Բաժանորդագրվել կարելի է և վերադիր վճարով՝ (налож. плат.) 20 կ. աւելի արժէքով, այսինքն բաժանորդները վճարում են պօստին պրեմիաները ստանալուց 2 ր. 20 կ.։ Հասցէն՝ Тифлисъ—М., Вознесенская ул. № 8, главная к-ра ред. „Журналъ-Лечебникъ". Թիֆլիսում բաժանորդագրութիւնը ընդունվում է նոյնպէս և Կենտրոնական գրավաճառանոցում։

(հ. կ.) 249. 10—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный